լացնում էր խանը—իրաւունք չունին այժմեանիցը աւելին պահանջել։ Այնքան մնացել չէ Բրդը—խան—Բէգի, խան—Մահմուդի, խան Աւդալի ժամանակը, երբ քրդերը այս աշխարհի, իւրեանց ազատութեան համար արիւն էին թափում։ իսկ հայերը ոչ միայն բաւականանում էին մեզ չ՝օգնելովը այլ և Տաճկաց զօրակարգերումը կռվում էին քրդերի դէմ։ Հայերը իւրեանց աշխարհի ազատութեան մի կաթիլ արիւն անգամ դեռ չեն թափել։ Այս համեմատութեան մէջ պէտք է յիշել, որ քրդերը, ինչպէս որ բնական է լեռնականներին, վայրենի անզուսպ են, բայց չը կայ մի ազգ, որին այնքան համակրէին, որքան հայերին են համակրում*)։ Որքան որ Տաճիկները շողոքորթէին, բայց առաջին կարելի դէպքին, նոքա կը բարձրացնեն նոցա դէմ իւրեանց զէնքը իւրեանց ազատութեան համար։ Հայերը, որ հասկացող են, հարուստ են, քաղա-

---

*) Մի զարմանալի պատմութիւն էր անում Թադէի վանահայր արժանապատիւ Կնայի վարդապետը։ 1880-ին ասում էր նա, բացի հայերի երկու գիւղերից, բոլոր գիւղերը թալանեցին։ Քրդերը վանքի չորս կողմը եղած թաթարների գիւղերը կողոպտում էին, բայց վանքին եւ նոքա մօտ եղած գիւղին բոլորովին ձեռք չը տուին։ Մի անգամ սարից քշել տարել էին, վանքի գիւղի յիսուն ոչխարները, երեւի սխալմամբ, որովհետեւ մի շաբաթից զկնի, մի գիշեր վանքի պարսպի տակից մի քուրդ, խեղդ-